Bavit-ի խոյակների հետ, որ Crum-ը բիւզանդական է համարում, իսկ Strzygowski-ն ծագումով աւելի հին Դ.-Ե. դարերի, համեմատելի յատկապէս No. 7344-ը, իսկ 7345-ը համեմատելի Զուարթնոցի հետ:

Պատկ. 64 զարդաքանդակը սասանեան արուեստին եւս յատուկ, հասկածեւ է, ո-



Պատկ. 60

րին նմանները տեսանք Գ. Գյխի մէջ եր. 69 եւ հէնց այստեղ քիչ առաջ: Այս զարդը նրկատւում է եւ հարեւան ազգերի արուեստի մէջ բաւական ընդարձակ չափով Ե.-Զ. դարերում. օրինակ Կեսրինիայի արծաթի սախտակների վրայ, որ այժմ Նիւ-Եօրքի Մետրոպոլիտէն թանգարանի սեփականութիւն է, Մարգանի ժողովածու. Շարլ Դիլը համարում է այն Ե. դարի վերջերի կամ Զ.-ի սկզբի գործ,* իսկ Ստրշիգովսկին Զ.-է. դարի:** Մեր չէնքի ժամանակը որոշելու կռուան կարող ենք ընդունել նաեւ ճակատի վիրական խուցուրի գրութիւնը, որից միտք հանել կարելի չեղաւ:

---

*L'école artistique d'Antioche et les tresors d'argenterie Syrienne, pl. 1 և 2.

**Strzygowski, L'ancient art de Syrie. Medaillons de Shypre. p. 24: Altai-Iran. 44–45, Taf. VII.